ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Կարեն Ալավերդյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Հաագա (Նիդերլանդների Թագավորություն), 2024 թ. հունվարի 30 – փետրվարի 2-ը

3. Հրավիրող կողմը

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Խարդախության և խախտումների դեմ պայքար / Event on Combatting fraud and irregularities» թեմայով միջոցառմանը:

5. Քննարկված թեմաները

- Կոռուպցիան ու խարդախությունը ԵՄ տեսանկյունից
- Խարդախության համակարգի ընդհանուր նկարագիրը
- Քննարկում խարդախության ու կոռուպցիայի վերաբերյալ
- Խարդախության ու կոռուպցիայի ռիսկերի հսկողության գործիքակազմը
- Կոռուպցիայի և խարդախության դեմ պայքարի վերաբերյալ քննարկում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման նպատակը երկրների ֆինանսների նախարարություններին և համապատասխան հասարակական կազմակերպություններին տնտեսության և պետական հատվածի բարեփոխմանն ուղղված ջանքերում աջակցելն է՝ կենտրոնանալով հիմնականում

հանրային ֆինանսների կառավարման վրա և Նիդերլանդների Թագավորության լավագույն փորձը օգտակար կարող է լինել այդ նպատակին հասնելու համար: Միջոցառման ընթացքում ներկայացվել է կոռուպցիայի և խարդախության վերաբերյալ ԵՄ իրավահամակարգում գործող կարգավորումները: Նիդերլանդների Թագավորության կենտրոնական կառավարության աուդիտի ծառայությունը (CGAS) Նիդերլանդների կենտրոնական կառավարության անկախ ներքին աուդիտի գործառույթն է: Կենտրոնական կառավարության աուդիտի ծառայությունը կառավարման առումով ֆինանսների նախարարության մաս է, բայց անկախ բոլոր նախարարություններից: CGAS-ը աուդիտորական եզրակացություններ է տրամադրում նախարարությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, իրականացնում է աուդիտ ըստ անհրաժեշտության և պահանջի, խթանում է համագործակցությունը տարբեր գերատեսչությունների միջև կառավարական աուդիտի ոլորտում: Կենտրոնական կառավարության աուդիտի ծառայությունն իր գործունեությամբ ակտիվորեն նպաստում է կառավարման, ղեկավարության և հաշվետվողականության աուդիտների որակի բարելավմանը: Աուդիտի ծառայության մասնագետների կողմից ներկայացվել է իրենց կողմից մշակված և աուդիտների ընթացքում կիրառվող խարդախության ու կոռուպցիայի ռիսկերի հսկողության գործիքակազմը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Փետրվարի 6, 2024թ.

Recoverable Signature

X

ԿԱՐԵՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Signed by: ALAVERDYAN KAREN 2602830070